Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
ապրիլի 4-ի N 479-Ն որոշման

Ձ Ե Վ Ե Ր

ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՅԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Աջակցություն տրամադրելու համար բռնության ենթարկված երեխայի ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչը կարող է դիմել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության՝ իր բնակության վայրի տարածքային կենտրոն, պետական կառավարման այլ մարմիններ և տեղական ինքնակառավարման մարմիններ կամ դրանց ենթակայությամբ գործող կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ: Եթե բռնության ենթարկված երեխան ուղղորդվել է երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն, ապա աջակցությունը տրամադրվում է այդ կենտրոնի կողմից, կամ այդ կենտրոնը դիմում է այլ ծառայություններին, ներառյալ՝ ուսումնական և բուժական, նրանց կողմից ծառայություններ տրամադրելու համար:

2. Բռնության ենթարկված երեխային, օրենսդրությամբ սահմանված կարգով, տրամադրվում են ծառայության հետևյալ ձևերը՝

1) խորհրդատվական օգնությունը.

2) վերականգնողական օգնությունը.

3) ցերեկային հաստատությունում ծառայություններ տրամադրելը.

4) երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնում խնամքի կազմակերպումը.

5) իրավական օգնությունը.

6) կրթության կազմակերպումը.

7) բժշկական օգնությունը.

8) սոցիալ-հոգեբանական օգնությունը:

3. Բռնության ենթարկված երեխային խորհրդատվություն առաջնային տրամադրվում է նրան հայտնաբերող մարմնի կողմից՝ ներկայացնելով երեխայի հիմնական պահանջմունքները և սոցիալական կարիքները բավարարելու ուղիներ և եղանակներ գտնելու, ստեղծված իրավիճակին համարժեք սոցիալական ծառայություններ ստանալու վերաբերյալ խորհուրդներ ու առաջարկություններ, ինչպես նաև սոցիալական պաշտպանության ոլորտում երեխայի իրավունքների և դրանց իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը:

4. Վերականգնողական օգնությունն ուղղված է բռնության ենթարկված երեխայի հիվանդությունների, վնասվածքների, ֆիզիկական, մտավոր և այլ խանգարումների բուժմանը, հաշմանդամության հանգեցրած խեղումների և հիվանդությունների զարգացումն ու ծանրացումը կանխելուն, հաշմանդամություն ունեցող երեխայի օրգանիզմի խանգարված կամ կորսված ֆունկցիաների և առողջության վերականգնմանը: Վերականգնողական օգնությունը տրամադրվում է «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված միջոցներով:

5. Բռնության ենթարկված երեխային ցերեկային հաստատությունում ծառայություններ տրամադրելը կազմակերպվում է այն դեպքում, երբ երեխան չի ստանում խնամք երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնում, և եթե երեխայի բնականոն միջավայրում գտնվելը չի հակասում երեխայի լավագույն շահերին: Ցերեկային կենտրոններում խնամքը տրամադրվում է բռնության ենթարկված երեխային, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նաև նրա ընտանիքի անդամներին:

6. Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնում խնամքը կազմակերպվում է այն դեպքում, երբ երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում հնարավոր չէ կամ չի բխում երեխայի լավագույն շահերից, և բացակայում են այլընտրանքային խնամքի այլ ձևերը: Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնում խնամքը կազմակերպելիս հաշվի են առնվում բռնության ենթարկված երեխայի հոգեբանական առանձնահատկությունները, ինչի հիման վրա ընտրվում են սոցիալական աջակցության կոնկրետ ձևերը, որոնք բխում են երեխայի կարիքներից:

7. Իրավական օգնությունը բռնության ենթարկված երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով նրան հայտնաբերած կամ խնամող կամ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպության կողմից իրավաբանական օգնության կազմակերպումն է կամ իրավաբանական օգնություն ստանալու նպատակով ուղղորդումն է:

8. Կրթության կազմակերպումն իրականացվում է «Կրթության մասին» օրենքին և դրանից բխող այլ իրավական ակտերին համապատասխան:

9. Բժշկական օգնությունը կազմակերպվում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքին և դրանից բխող այլ իրավական ակտերին համապատասխան:

10. Սոցիալ-հոգեբանական օգնությունը տրամադրվում է բռնության ենթարկված երեխայի կենսագործունեությանը և սոցիալական ներառմանը խոչընդոտող ներանձնային կամ միջանձնային խնդիրների լուծման կամ մեղմացման, ինչպես նաև նրա՝ սոցիալական հարաբերությունների կառուցման կամ վերականգնման համար անհրաժեշտ հմտությունների զարգացման նպատակով:

11. Եթե բռնության ենթարկված երեխան գտնվում է երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնում, ապա սույն հավելվածով նախատեսված աջակցությունը տրամադրվում է այդ կենտրոնի կողմից:

12. Սույն հավելվածի 2-րդ կետում նշված աջակցության յուրաքանչյուր ձև տրամադրվում է այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից, որն օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով պարտավոր է տրամադրել այդ աջակցությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

05.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ